այս ինչ անձինք ի զուր տեղը յարձակվում են ինձ վրա։» Այս խօսքերը հերիք չեն ցոյց տալու համար, թէ հայ ուսանողը ոչնչով չէ տարբերվում այն անկիրթ և լեթված յակոտից, որը կամենալով իր վրա որ և իցէ մի սկանդալով գրաւել հաւաքված հիւրերի ուշադրութիւնը, շատ անգամ ընկնում է գետինը և ոտերով ու գլխով ծեծկվռտում թէ ինչու նրա վրա նայեց կամ նրա հետ խօսեց սան հիւրերից մինը...

Միւս կողմից մենք ևս բոլորովին համաձայն ենք, որ հայ ուսանողութիւնը ընդհանրապէս ոչինչ չէ կարող շինել, քանի որ գտնվում է իրան այժմեան անմխիթար վիճակի մէջ, որովհետև նրանց մէջ գժուար թէ կայ հարիւրից երեք մարդ, որը բացի իր առարկաների հոգսից և դիպլոմ ստանալու ինտերեսից, ունենայ մի այլ ընդհանուր և աւելի բարձր ինտերես։ Հայ ուսանողը ոչ թէ ինտելլիգենցիայի բազմակողմանի և ընդհանուր մարդկային ձգտումներով է ապրում, այլ կոշեգործի, կօշկակարի, մանրավաճառի և որ ևիցէ մի արհեստաւորի օրինակով, նրա ուշքը, միտքը, ձգտումները և վերջնական նպատակը ամփոփած է միայն նրա վրա, որ շուտով ստանայ ուսեալի պաշտօնական վկայագիրը, էլ բնաւ չը հոգալով ըմբռնել սերտած գիտութիւնների ազատ և լայնածաւալ հոգին։ Հայ ուսանողը մեծացել է իր հօր ասնը կոպէկական հոգով, նոյն նեղ հոգով է դուրս գալիս ու կեանք մտնում համալսարանի պատերից կանդիդատների, մագիստրոսների և դոկտորների դիպլոմով...

Ասածիս ամենապերճ ապացոյցը այն կարող է լինել, որ քիչ կարելի է գտնել մայրաքաղաքում կրթվող հայ ուսանող, որի հետ խօսես ժամանակակից հասարակական և քաղաքական երևոյթների և շարժումների վրա, որ նա ցանկութիւն ունենայ կամ կարող լինի յայտնել քեզ մի լուրջ հայեացք, մի օգտակար և հմուտ դատողութիւն։ Հայ ուսանողը, եթէ նորան ամիսներով անգամ փորձէք, ամեն քայլափոխում ձեզ այնպիսի խորթ, խելքից դուրս և լոգիկայից զուրկ պլանդակ բացատրութիւններ կը տայ որ և իցէ մի կատարվող քաղաքական իրողութեան վրա, որ մարդ կը մնայ շուարված, ամենաանկեղծ կերպով հարց առաջարկելով իր մտքում։ «արդեօք այս ուսանողի ուղեղը իր տեղն է, թէ մի բան է պատահել նորա հետ։ Ուրեմն ի՞նչպէս կարելի է պահանջել, որ այսպիսի մինը վերառնէ զրիչը և հայոց կամ ռուսաց լեզուով տասը տող վայելուչ գաղափարներ արտայայտէ այն նիւթի վրա, որը չունէ ոչինչ կապ նորա առարկաների հետ... չէ՞ որ մեծ բարութիւն կը լինի հայ հասարակութեան որ այսպիսի մինը ինչ ուզում է անէ, գէթ իր խելքից դուրս բանին ձեռք չը տայ... գարձեալ աւելորդ եմ համարում ասել, որ պայծառ բացատրութիւնները այնչափ խօսում են իրանք իրանց օգտին հրապարակապէս, որ նոցա վրա երբէք չէ կարող լինել մեր խօսքը...

Այս ամենից յետ զարմանալի չէ՞ արդեօք այն յանդգուն ինքնավստահութիւնը, որը ցոյց է տալիս հայ ուսանողը, երբ մի փորձող մարդ սկսում է խօսել նորա հետ կամ ծաղրաբար գովելով նորան, կամ թէ յարձակվելով նորա վրա։ Այս երկու դէպքում էլ հայ ուսանողը մատնում է իրան իր կատարեալ պատկերի մէջ—նա յայտնվում է մի տարօրինակ մարդ, որը կեանքից հեռանալով կորցրել է իր բոլոր գործնական միտքը, իսկ տեսականապես այնչափ է զարգացել, որ խօսած ժամանակը ամենահամեստ մարդուց անգամ չէ կարող լսել ուրիշ անուն, բացի անձնապատիր իմաստակի և կատարեալ իդիոտի։ Ահա այսպիսիներին են դուրս թողնում խելքի հայ ազգի գլխին պատուհաս մեր բարձրագոյն ճեմարանները... Ով մեզ կասկածում է հենց մի փոքր կրքի մէջ, թող նայէ նրանց վրա, որոնք արդէն ազատ պատում են կեանքի ասպարիզում, նայնպէս և նրանց վրա, որոնք պատրաստվում են մտնել շուտով այն երամական դասի մէջ, որ ասվում է հայ ինտելլիգենցիա...

Գաս. Եաղուբեան

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

— 5 Նոյեմբերի

«Մշակի» № 150-ում մի առ մի նկարագրված էր տեղոյս հայ-կաթոլիկաց ծխական ուսումնարանի ներկայ որդրմելի վիճակը, որի հետևն և փոքր դատատան խոնարհութիւնը, աշակերտաց համար անբաւական լինելը անուշադիր էր մնացած։ Այդ տեսակ վարմունքը ուսումնարանի մը հետ, վատ ազդակ էր խոստանում և կամ բոլորովին փակվել էր սպառնում և կամ մի տարին աստիճանի փիզական ուսումնարանի հետ էր հաւասարեցնում նորան։

Մի քանի ինքնահաւան անձինք յանկարծ բառնում էին տէր-Ա. Շ.-ի վրա, խոստանալով, որ եթէ իրանց ձեռքը լինի հոգաբարձութեան գլխանոցը, և տէր-Ա. Շ.-ը դուրս գայ նորաշէն մեծ դատատնից, այն ատենը ուսումնարանը կուենեար երկու դատատուն՝ պատրաստական և առաջին, որոնք նրանց ՀՈՐՇԻ. պէտք է համապատասխանէին կարապետեան կամ նահանգական ուսումնարանին։ Տէր-Ա.Շ.-ի պատասխնից հրաժարվելուց յետոյ, ինչպէս որ երաշում էին, հոգաբարձութիւնը անցաւ լիչեալ պարոններից երկուսի ձեռքը։ Նոքա աշակերտների թիւը հասցրին մինչև 30-ը և նոյեմբերին լիչեալ փոքր և հնաշէն դատատնում, որտեղ, իմ կարծիքով, 15 աշակերտից աւելի չէր կարելի տեղաւորեր։ Իսկ նորաշէն և մեծ ուսումնարանը զինուորանոց արին նոր հոգաբարձուները, որից ստացած փողերը պէտք է ուսուցչի ռոճիկ տան։ Որովհետև ուսումնարանը գտնվում է եկեղեցու գաւթում, այդ պատճառով զինուորները պարապում են մարմնամարզութեամբ նոյն գաւթի մէջ։ Այս առաջին անգամն է, որ պատեղ և գուցէ ուրիշ հայաբնակ քաղաքներում ևս, հայոց եկեղեցու գաւթը ծառայէր որպէս զինուորների մարմնամարզութեան տեղ։ Կիրակի օրը, երբ երրորդ հոգաբարձու տէր-Պ. Ղ. քահանային պատահեցայ եկեղեցու գաւթում, հարցրի նրան ուսումնարանի մասին—«Այնինչ, չատ լաւ է գնում մեր ուսումնարանը. արդէն աշակերտների թիւը մինչև 30-ի հասաւ, գուցէ մի քանի օրից եռաբ աւելի յատանան, պատասխանեց մեր պատուելին իսկ ուսումնարանի փոքրութիւնը, նկատեցի նորան։ —Լաւ, այդ էլ հաշող չէ, դրան էլ ճարը գտայ, պատասխանեց պատուելի կղերը,—հրամայեցի վարժապետին, որ նորեկները նստացնէ յատակի վրա, իսկ մնացած մեծերը հաւաքվում են դատատան երեք նստարանների վրա։ Ձիշդ այսպէս են մեր գիւղական ուսումնարանները...

Վերջապէս մի խորհուրդ տուի նրան, որ նա վարձէ մի երկրորդ ուսուցիչ, որ ազգոյց տվորցնէ ռուսաց լեզու և հայերէն ձայնագրութիւն, որը ամենահարկաւոր էր մեր ուսումնարանին։ Դա երբ իմացաւ, որ այդ իմ առաջարկը գրիգորեան հարիւրի վրա էր, ամենամեծագոհութեան նշան ցոյց տալով ասաց.—«Ոչ. այդ անկարելի է, մեր կաթոլիկ ազգաքը ես չեմ կամենում, որ դատարակվին հայ ուսուցչի հովանաւորութեամբ։ Նոցա պէտք է կաթոլիկ ուսուցիչ, որ վաթոլիկ հոգի» ստանան, վաթոլիկ հոգի»։

Ինչ համոզմունք... ինչպէս երևում է, մեր ողորմելի կղերը այնպէս է համոզված, թէ կաթոլիկի հոգին կազմված է մի քանի տեսակ թանգագին նիւթերից, կամ նորա առաջնորդութեան ոգին, նրա գաղտիքը աւելի լուսաւորված և զօրեղ է, ինչպէս որ իրան ոգին և գաղափարն է... Իսկ լուսաւորական հայերը՝ այդ բանից զուրկ է...

Այդ համոզմունքը ունեն նոյնպէս մեր կաթոլիկներից ծերերը և կանանցից պառաւները։ Իսկ հայ-կաթոլիկ երիտասարդները այդ դասին չեն պատկանում. նոքա հայասէր են, նոքա ազգասէր են, նոքա կրօնի խորութիւնները մէկ տեղ թողած, ազգութեան հետևողներն են. նոքա «Մշակ» լրագրին յարգում են, որ նա ազգասիրութիւն է քարոզում, մէկ տեղ գնելով կրօնի վէճը, մէկ խօսքով, նոքա համակրում են տասը և իններորդ գարի գաղափարին, որը պահանջում է «լեզուս, հայրենիքս և ազգութիւն»։

Բոլորը կերծ ու չիմնու խօսքեր են, որ ժողովրդան հաւատացնում են մեր հոգաբարձուները, թէ ուսումնարանը ազքատ է, փող չունի։ Ուսումնարանը, բացի իր սեփական անշարժ կալուածքների արդիւնքից, ունէր նոյնպէս մի քանի հարիւր բուբլի զուտ փող, որով անցեալ տարվայ հոգաբարձուների առաջարկութեամբ գնվեցաւ մի տուն ազքատանոցի համար, որտեղ այժմս բնակվում է միայն մի ազքատ պառաւկին։ Հարցնում եմ այդ պարոններին. մինթէ ուսումնարանի պարտաւորութիւնն է ազքատի բնակութեան տեղ տալը, կամ ազքատի կերակրելը։ Կարծում եմ, այդ եկեղեցու պարտաւորութիւնն է. մի և նոյն ժամանակ եկեղեցին ինքն է պարտաւոր ուսումնարանին օգնել, և ոչ թէ ուսումնարանի փողով եկեղեցու ազքատները պատսպարել կամ կերակրել։ Մենք աչքի առաջ ունենք արդէն հայոց Կարապետեան և Վարդանեան ծխական ուսումնարանները, որոնց բոլոր ծախսը եկեղեցին ինքն է վճարում։

Ցուսով ենք, որ նոր ընտրված հոգաբարձուները, մեծ և նորաշէն ուսումնարան կը դարձնեն ազգայոց դատատուն, և եկեղեցոյ գաւթը, փոխանակ զինուորների մարմնամարզութեան տեղ անելու, (որի վրա արդէն ժողովուրդը զարհուրում է) կը դարձնեն ազգայոց ճեմելիք։ Նոյնպէս պէտք չէ անուշադիր թողել և ուսումնարանի փողի կրօնութիւն. ուսումնարանը իրաւունք ունի պահանջել նոյն գումարը եկեղեցուց, որով գնվեցաւ ազքատանոցը։

Հակ-Հասան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— Թիֆլիս, 28 հոկտեմբերի.

Հաւաքարում, անցեալ չաթի, իբրև հետաքրքիր նորութիւն կարելի է համարել նորին բարձր սրբազնութիւն Գրիգոր եպիսկոպոս Ադաֆիրեանցի կարգադրած քարոզը Էչմիածնոյց եկեղեցում, կիրակի, պատարագին, ուսման և դաստիարակութեան վերաբերութեամբ. ժողովուրդը սովորականից շատ էր, մանաւանդ կանանց սեռից, և քարոզը շատ քաղցր տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա։ Կենդանի տրապարակական խօսքը, անուանեցէք դուք նրան քարոզ, կամ մի ուրիշ տեղ—լեկցիա, անկասկած, ամենայարմար ճանապարհը և զօրեղ զէնքն է՝ արծարծել և արթնացնել ժողովրդի մէջ մարդկային զգացմունքներ, բարձրացնել նրա մարդկային արժանաւորութիւնը, լուծել նրա առօրեայ կենսական խնդիրները, մշակել նրա ընդունակութիւնները և հասարակական հարցերը։ ցոյց տալ նրա պետական, ազգային և ընդհանուր մարդկային պարտքերը և իրաւունքները։ Մանաւանդ սերնդի ուսման կրթութեան հոգսի հետ, մեր հասարակական առաջնորդների վրա դեռ մնում է հոգալ՝ այն բազմաթիւ խաւար և ազքատ շերտերի, որոնց դրութիւնը երկար տեսլով մի ամենդարձնակութիւն է ներկայացնում ժամանակակից պահանջների և գաղափարների առաջ,—նոյն իսկ մեր հասարակական առաջնորդների ինքներին, նպատակի կէտից նայելով, անհրաժեշտ է տարածել այդ հին սերունդ ասված մարդոց մէջ, կենդանի խօսքով, ժամանակակից գաղափարներ, բացատրել նրան կրթութեան վերաբերութեամբ խնդիրները և առհասարակ գիտակցական, խելացի ընթացք տալ նրա գործունէութեան, ըստ թափելով նրանց վրա, որպէս զի կարողանանք մի փոքր ներդաշնակել այն կոնդերը, որ ուզում ենք խաղալ նրանց ժամանակների առաջ։—Այդ տեսակ կենդանի տրապարակախօսութիւնների կարևորութիւնը աւելի և աւելի է աչքի ընկնում, չը մոռնալով մեր մէջ վիրակոծրեալ դարերներ, որոնք ժամանակ սերնդի հետ կրթվելը և չաճեցաս սերունդը։ Մեր մէջ այդ դերը ընկնում է համարվում դեռ հոգեւորականների վրա, եւ էլ հասանելն եմ. բայց միւս կողմից ծածուկ չէ ամենքս համար, որ պատասխ չեն դրանք, և պատասխաներն ևս արթուն չեն այդ գործում։

Մասնաւորելով Հաւաքարի վրա, կարելի է ասել, որ այնտեղի խաւարի մէջ ծփող կարօտեալ հօտը, երկար տարիների ընթացքում զուրկ է լսել վերոյիշեալ ձեր քարոզ։ Երբեմն երբեմն Հաւաքարի քահանաների գլխում, այն էլ միայն մեծ պասին, ծնում է քարոզելու ցանկութիւնը, ներելիք իշտաը. Ինչ է նրանց յայտնածը. մի տեղ դա սկսվում է այդպէս. սարելի ժողովուրդ, ինչ զանազանութիւն կայ լ օ բ ու և մ ա ի մէջ, —և ոչինչ. ուրեմն լոքի կերեք և միս միք ուտիլ, պաս պահեցէք, այդ Աստուծոյ չատ հաւանելի է։» Մի ուրիշ անգամ քարոզի բովանդակութիւնն է. «Սարելի ժողովուրդ, մինչև սը ռ ն ա կ ի ն ա ա պ օ ն չը ք ս վ ի, գիտէք, որ չի պատյտ գալ, մենք ենք ձեզ արքայութիւն տանողները, ուստի ա ռ ա ա ա ա ա ա ա ք ս ե ց է ք ա ա պ օ ն ը ս ռ ն ա կ ի ն» և իսկոյն հետևում է գանձանակի թափչիկ։ Այս տեսակ քարոզների մէջ ժողովուրդը չը գիտենալով իր ցաւերի և հոգսերի լուծումը, թափուր է թողել երկար ժամանակ եկեղեցիները։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչպիսի տպաւորութիւն կարող էր թողնել սրբազանի խելացի և ազդու քարոզը՝ թէ իր բովանդակութեամբ և թէ իր ձևով։ Համարելով այն օգուտները, որ ստացել է և ստանում է մարդկութիւնը լուսաւորութիւնից, սրբազանը առանձին կերպով բացատրեց մանաւանդ օրիորդների կրթութեան կարևորութիւնը՝ — անուանելով նրանց ազգի արգանդ, հիմք, արմատ։ Այստեղ, օգտուելով Հաւաքարի Ա. Մարիամեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիների ներկայութիւնից, սրբազանը մանաւորեց հանդիսականներին այս քաղցր տպաւորութիւնները, որ թողել էին իր վրա, քարոզի նախկին օրը, դպրոցի ամանուհիները իրանց խելացի պատասխանոներով և յառաջադիմութեամբ, որոնք նրա խօսքում վարդ էին բացել իր սրտում։—Քարոզի տպաւորութիւնը և ազդեցութիւնը զգալի եղաւ, մանաւանդ երկու առանձնութիւններով լեցվել, որ մտածելի, հասարակասս էր, և միւս կողմից՝ չոր ու ցամաք վկայութիւնների ու կանոնների տեղ,—գործնական օրինակների և ցուցմունքների ներածութեամբ. ձայնը մի փոքր թաղ էր. թէպէտ այդ դիպուածքում ամենին լսելի էր։ Ցանկալի է, որ սրբազանը չարունակէր իր բռնած ընթացքը, որի համար նա օրհնաբաշ աւելի և աւելի վայելում է Թիֆլիսի հասարակութեան սէրը և համակրութիւնը։ Եկեղեցոյ գուրս գալով, ամեն անհատ, քարոզի օրը տարաւոր տուն մի մի թանգագին միտք բարոյական մտթիւրութեան հետ, բայց մանաւ արդեօք անխոնի փարիսեցոց կերպարանքով չարված արեգանի ոմանց գլխումը մի խօսք անդամ,—կասկածում ենք...

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— Շուշի, 12 Նոյեմբերի

Ներբեւ «Դրօշակաց» մէջ լուր է հաղորդված Շուշուց, իբրև թէ այն տեղի հայոց օրիորդաց դպրոցի մի նորեկ ուսուցիչ վերին աստիճան անբարոյական է.

Եթէ «Դրօշակաց» չէ ցանկանում, որ մի գաւառական հայոց դպրոց անդամ դատապարտվի, ապա հրատարակում նրան, որ աւելի փաստերով խօսէ մեր ուսումնարանի վրա և մանաւանդ հ ա ս ց է՞ն ճ շ ա ռ ա թ ե ա մ բ Ն ա ա ռ ա կ է։

Շատ ժամանակ չէ, տէր, որ ցոյց էի տուել, թէ մեզանում այստեղ կան մարդիկ, որոնք չատ կը ցանկանային, որ մեր թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցների վրա քարեր նետուին, այն ևս ծածուկ անկիւններից, որովհետև յայտնապէս նոցա հակառակ հանդիսանալու մէջոց չունեն։

Ե՞րբ պէտք է վերջանայ վատ զրպարտութիւնը և լրագրիները մեզ կրքերին ծառայեցնելը։ «Դրօշակաց» միայն այսքան կարող եմ պատասխանել, թէ չատ ափսոսում եմ, որ նորա Թիֆլիսից այս անգամ նորան չարաչար մոլորեցրել է։ Թող փորձէ և այս կը տեսնվի։ Եւ նորա արդարադատութեան դիմելով ինքդում եմ, որ այս նամակը արտատպէ։

Ցնորաշէն Գարաքեան թեմական դպրոցի և օրիորդաց ազգային-հոգեւոր դպրոցի

Ս. Մանանդեանց

Մանաւորելով Հաւաքարի վրա, կարելի է ասել, որ այնտեղի խաւարի մէջ ծփող կարօտեալ հօտը, երկար տարիների ընթացքում զուրկ է լսել վերոյիշեալ ձեր քարոզ։ Երբեմն երբեմն Հաւաքարի քահանաների գլխում, այն էլ միայն մեծ պասին, ծնում է քարոզելու ցանկութիւնը, ներելիք իշտաը. Ինչ է նրանց յայտնածը. մի տեղ դա սկսվում է այդպէս. սարելի ժողովուրդ, ինչ զանազանութիւն կայ լ օ բ ու և մ ա ի մէջ, —և ոչինչ. ուրեմն լոքի կերեք և միս միք ուտիլ, պաս պահեցէք, այդ Աստուծոյ չատ հաւանելի է։» Մի ուրիշ անգամ քարոզի բովանդակութիւնն է. «Սարելի ժողովուրդ, մինչև սը ռ ն ա կ ի ն ա ա պ օ ն չը ք ս վ ի, գիտէք, որ չի պատյտ գալ, մենք ենք ձեզ արքայութիւն տանողները, ուստի ա ռ ա ա ա ա ա ա ա ք ս ե ց է ք ա ա պ օ ն ը ս ռ ն ա կ ի ն» և իսկոյն հետևում է գանձանակի թափչիկ։ Այս տեսակ քարոզների մէջ ժողովուրդը չը գիտենալով իր ցաւերի և հոգսերի լուծումը, թափուր է թողել երկար ժամանակ եկեղեցիները։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչպիսի տպաւորութիւն կարող էր թողնել սրբազանի խելացի և ազդու քարոզը՝ թէ իր բովանդակութեամբ և թէ իր ձևով։ Համարելով այն օգուտները, որ ստացել է և ստանում է մարդկութիւնը լուսաւորութիւնից, սրբազանը առանձին կերպով բացատրեց մանաւանդ օրիորդների կրթութեան կարևորութիւնը՝ — անուանելով նրանց ազգի արգանդ, հիմք, արմատ։ Այստեղ, օգտուելով Հաւաքարի Ա. Մարիամեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիների ներկայութիւնից, սրբազանը մանաւորեց հանդիսականներին այս քաղցր տպաւորութիւնները, որ թողել էին իր վրա, քարոզի նախկին օրը, դպրոցի ամանուհիները իրանց խելացի պատասխանոներով և յառաջադիմութեամբ, որոնք նրա խօսքում վարդ էին բացել իր սրտում։—Քարոզի տպաւորութիւնը և ազդեցութիւնը զգալի եղաւ, մանաւանդ երկու առանձնութիւններով լեցվել, որ մտածելի, հասարակասս էր, և միւս կողմից՝ չոր ու ցամաք վկայութիւնների ու կանոնների տեղ,—գործնական օրինակների և ցուցմունքների ներածութեամբ. ձայնը մի փոքր թաղ էր. թէպէտ այդ դիպուածքում ամենին լսելի էր։ Ցանկալի է, որ սրբազանը չարունակէր իր բռնած ընթացքը, որի համար նա օրհնաբաշ աւելի և աւելի վայելում է Թիֆլիսի հասարակութեան սէրը և համակրութիւնը։ Եկեղեցոյ գուրս գալով, ամեն անհատ, քարոզի օրը տարաւոր տուն մի մի թանգագին միտք բարոյական մտթիւրութեան հետ, բայց մանաւ արդեօք անխոնի փարիսեցոց կերպարանքով չարված արեգանի ոմանց գլխումը մի խօսք անդամ,—կասկածում ենք...

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

— Շուշի, 12 Նոյեմբերի

Ներբեւ «Դրօշակաց» մէջ լուր է հաղորդված Շուշուց, իբրև թէ այն տեղի հայոց օրիորդաց դպրոցի մի նորեկ ուսուցիչ վերին աստիճան անբարոյական է.

Եթէ «Դրօշակաց» չէ ցանկանում, որ մի գաւառական հայոց դպրոց անդամ դատապարտվի, ապա հրատարակում նրան, որ աւելի փաստերով խօսէ մեր ուսումնարանի վրա և մանաւանդ հ ա ս ց է՞ն ճ շ ա ռ ա թ ե ա մ բ Ն ա ա ռ ա կ է։

Շատ ժամանակ չէ, տէր, որ ցոյց էի տուել, թէ մեզանում այստեղ կան մարդիկ, որոնք չատ կը ցանկային, որ մեր թէ տղայոց և թէ օրիորդաց դպրոցների վրա քարեր նետուին, այն ևս ծածուկ անկիւններից, որովհետև յայտնապէս նոցա հակառակ հանդիսանալու մէջոց չունեն։

Ե՞րբ պէտք է վերջանայ վատ զրպարտութիւնը և լրագրիները մեզ կրքերին ծառայեցնելը։ «Դրօշակաց» միայն այսքան կարող եմ պատասխանել, թէ չատ ափսոսում եմ, որ նորա Թիֆլիսից այս անգամ նորան չարաչար մոլորեցրել է։ Թող փորձէ և այս կը տեսնվի։ Եւ նորա արդարադատութեան դիմելով ինքդում եմ, որ այս նամակը արտատպէ։

Ցնորաշէն Գարաքեան թեմական դպրոցի և օրիորդաց ազգային-հոգեւոր դպրոցի

Ս. Մանանդեանց